«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

## 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում

Աշտարակի տարծքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից կիսամյակի ընթացքում գնահատվել են 57 աշակերտներ՝ այդ թվում 20 աղջիկ և 37 տղա: Գնահատման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ճանաչվել է 53 աշակերտի մոտ, իսկ 4 աշակերտ կարիք չունի: Թվով 8 աշակերտի գնահատում իրականացվել է ՆՈՒՀ-ում և ՏՄԱԿ_ում՝ ծնողի դիմումի համաձայն իսկ 49-ը՝ ուսումնական հաստատություններում: կիսամյակի ընթացքում պլանավորվել էր իրականացնել 64 գնահատում: Կատարողականը պլանավորված թվից պակաս է 7 -ով: Թվի պակաս լինելը պայմանավորված է դպրոցներից ստացված դիմում հայտերով: Գնահատման գործընթացը իրականացվել է ծնողների դիմումների, դպրոցների և ՆՈՒՀ-երի տնօրենների կողմից ներկայացված դիմում հայտերի հիման վրա:

## 2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Աշտարակի տարծքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող 121 ուսումնական հաստատություններից 67-ում և 10 ՆՈՒՀ _ում սովորում են ԿԱՊԿ ունեցող 327 աշակերտներ՝ այդ թվում 231տղա, 96 աղջիկ: ՏՄԱԿ-ի և ուսումնական հաստատությունների կողմից մանկավարժահոգեբանական աջակցություն ստացել են 327 աշակերտներ՝ այդ թվում 231 տղա և 96 աղջիկ: կիսամյակի ընթացքում գրանցվել են դեպքեր, երբ ԿԱՊԿ ունեցող աշակերտները սկսել են հաճախակի բացակայել: Տարվել են աշխատանքներ, հանդիպումներ են կազմակերպվել ծնողի և ուսումնական հաստատության վարչական աշխատողների հետ: Արդյունքում երեխաները սկսել են կանոնավոր հաճախել դպրոց: Աշխատանքներն ավելի արդյունավետ են երկամսյա քննարկումների արդյունքում, ինչին մասնակցում են ՏՄԱԿ-ի տնօրենը, տնօրենի տեղակալները, մասնագիտական թիմի անդամները, ուսումնական հաստատության ուսումնական գծով փոխտնօրենը, դասավանդող ուսուցիչները և ԿԱՊԿ ունեցող աշակերտների ծնողները: Քննարկումներն անցնում են արդյունավետ և կրում են կառուցողական բնույթ: Աջակցությունը տրամադրվել է ծնողների և ուսումնական հաստատությունների տնօրենների կողմից ստացված աջակցության դիմումների հիման վրա:

## 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի վերապատրաստող մասնագետները կիսամյակի ընթացքում 121 ուսումնական հաստատություններում իրականացրել են 66 վերապատրաստումներ և 18 ՆՈՒՀ-ում 23 վերապատրաստում: Իրականացված վերապատրաստումներին ուսումնական հաստատություններում իրենց մասնակցությունն են ցուցաբերել 1000, իսկ ՆՈՒՀ-երում՝ 181 շահառուներ: Մասնակիցների թվում են եղել ինչպես վարչական աշխատողներ, այնպես էլ բազմամասնագիտական թիմի անդամներ, մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, դաստիարակներ, մեթոդիստներ, դաստիարակի օգնականներ և այլ մասնակիցներ: Մասնակիցների թիվը պլանավորված թվից ավել է 535-ով, որը պայմանավորված է եղել մասնակիցների ցանկությամբ:

Վերապատրաստումներն իրականացվել են ՀՄԿ-ի վերապատրասումների բաժնի կողմից տրամադրված թեմաների և դպրոցների տնօրենների կողմից ստացված դիմում հայտերի հիման վրա:

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | 346 |
| 2 | Կրթության աջակցող միջոցներ, մատչելիություն և խելամիտ հարմարություններ | 722 |
| 3 | «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» | 78 |
| 4 | ԱՈՒՊ | 35 |
| | | |

## 4. Խորհրդատվություն

Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետները կիսամյակի ընթացքում 80 ուսումնական հաստատություններում իրականցրել

են 272 և 17 ՆՈՒՅ-ում 59 խորհրդատվություն, որին մասնակցել են 1876 շահառու՝ այդ թվում վարչական աշխատողներ, բազմամասնագիտական թիմի անդամներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, դաստիարակներ, դաստիարակի օգնականներ, ծնողներ և այլ մասնակիցներ: Խորհրդատվությունների արդյունքում շահառուները ստացել են մեթոդական ցուցումներ: Ծնողների հետ տարվել են աշխատանքներ՝ ծնող, դպրոց, մասնագետ կապն ու համագործակցությունն էլ ավելի ամրապնդելու ուղղությամբ:

Խորհրդատվություններն իրականցվել են մանկավարժահոգեբանական աջակցություն իրականացվող մասնագետների կողմից իսկ թեմաներն ընտրվել են ըստ անհրաժեշտության:

### 5. Մշտադիտարկում

Աշտարակի տարծքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից կիսամյակի ընթացքում իրականցվել են 173 մշտադիտարկումներ՝ որից 124-ը ուսումնական հաստատություններում, 46- ը ՆՈՒՅ-ում և 3-ը ՄԿՈՒ հաստատություններում:: Մշտադիտարկումների արդյունքում պարզվել են ԿԱՊԿ ունեցոող աշակերտների հետ աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունները, ուսուցիչների կողմից բարձրացված խնդիրներն ու խոչընդոտները: Մանկավարժահոգեբանական թիմի անդամների, ինչպես նաև տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից կատարվել են քննարկումներ՝ արդյունավետ լուծումներ գտնելու ուղղությամբ: Մշտադիտարկումներն իրականացվել են ինչպես պլանային և այնպես էլ ըստ անհարժեշտության:

### 6. Ֆիզիկական միջավայրի հարմարեցում և խելամիտ հարմարեցումներ

Աշտարակի տարծքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից կիսամյակի ընթացքում կատարվել են աշխատանքներ ուսումնական հաստատություններում խելամիտ հարմարեցումների ձեռքբերման ուղղությամբ: Յուրաքանչյուր հաստատությունում աջակցություն տրամադրող բազմամասնագիտական թիմի անդամների կողմից կատարվել է ուղղորդում խելամիտ հարմարեցումների ընտրության ուղղությամբ: ԿԱՊԿ ունեցող բոլոր դպրոցներն ու ՆՈՒՅ-երը գրեթե ամբողջ ծավալով ապահովել են խելամիտ հարմարոցումները:

### 7. Համագործակցություն

Աշտարակի տարծքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից եռամսյակի ընթացքում, համագործակցության շրջանակներում, կատարվել են բազմաթիվ աշխատանքներ: Ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը կրում է

մշտական և շարունակական բնույթ, ինչի շնորհիվ կարողանում ենք միասնական մոտեցման արդյունքում լուծել առաջացած խնդիրներն ու գտնել խելամիտ լուծումներ: : Քննարկվում են նաև հետագա աշխատանքների կազմակերպման մանրամասները: Համագործակցել ենք նաև Արագածոտնի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնի և Աշտարակի Միասնական Սոցիալական Ծառայության աշխատակիցների հետ:

Կենտրոնի անվանումը՝ <<Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ

Տնօրեն՝ _______________ Մերի Արշակյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01 » «07» 2026թ.